ՊՈՂՈՇՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԾԱԳՈՒՄ-ՆԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Դ. Ի. ՄԱԹՆԵՎՈՍՅԱՆ

Հայկական միջնադարյան հերալդիկան (զինանշաններ) դեռևս ուսումնասիրված չէ։ Հին հայկական ֆեոդալական տոհմերից մի մասի հերալդիկ նշանները նույնիսկ ճշված չեն, ստույգ հայտնի են միայն XII—XIV դդ. մի քանի ազդեցիկ տների զինանշաններ (Պռոշյանների, Դսեղի Մամիկոնյանների, Վաչուտյանների), որոնք պահպանվել են տոհմական պաշտամունքային կառույցներում, ձեռագրերում և այլուր։

Զինանշանների վատ ուսումնասիրված լինելը պետք է համարել մեր պատմագիտության թերի կողմերից մեկը, որովհետև զինանիշագիտությունը հանդիսանում է օժանդակ պատմական գիտություն և լրացուցիչ ու հաճախ կարևոր տեղեկություններ է հաղորդում անցյալի քաղաքական-մշակութային կյանքի իրադարձությունների մասին, նպաստում նրանց համակողմանի լուսաբանմանը։

Գրավոր սկզբնաղբյուրները, ցավոք, շատ քիչ տեղեկություններ են հաղորդում հայկական հերալդիկ նշանների մասին, մեր պատմիչները չեն տվել նշանների նկարագրությունը (բացառություն է կազմում, թերևս, Փավստոս Բուզանդի հակիրճ հաղորդումը Մամիկոնյանների զինանշանի մասին)։ Նրանք հաճախ նշում են դրանց (հայերի մոտ ընդունված արտահայտությամբ՝ «նշանակների») առկայությունը միայն։ Այդ վկայությունները պարզորոշ հաստատում են, որ ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում, ֆեոդալական տոհմերը կամ նրանց առանձին տները ունեցել են սեփական զինանշաններ, դրոշներ և այլ տարբերիչ նշաններ։ Այդ տեսակետից առանձնապես արժեքավոր են IX—X դդ. պատմիչ Թովմա Արծրունու տեղեկությունները[1]։

Այլ երկրներում, Եվրոպայում, Ռուսաստանում միջին դարերում, հատկապես ուշ միջնադարում, կազմվում էին հատուկ գրքեր (Титулярник), ուր տրվում էր տարբեր ազնվական տների զինանշանների նկարագրությունը։ Դա շատ է հեշտացնում այդ երկրների հերալդիկայի ուսումնասիրությունը։ Հայաստանում առայժմ այդպիսի գրքեր չեն հայտնաբերվել, ուստի ուսումնասիրությունը հիմնականում պետք է կատարվի հուշարձանների վրա (մասամբ նաև ձեռագիր գրքերի մանրանկարներում) պահպանված նշանների վերլուծությամբ, հիմք ունենալով սվյալ տոհմի պատմական անցյալը և առնչությունը երկրի քաղաքական-մշակութային կյանքին[2]։

---

[1] Թովման հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում ֆեոդալի տոհմական տարբերիչ նշանների (ատրիբուտիկայի) մասին։ 849 թ. արաբ ոստիկանի դեմ կռվելու համար Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունին հայտարարել էր դորահավաք, որին ներկայացել էին նրա վասալ իշխանները (Արծրունյաց տոհմի տարբեր ճյուղերի և այլ տոհմերի՝ Ռշտունիների, Տրունիների և մյուսների ներկայացուցիչները)։ Պատմիչի խոսքերից պարզ երևում է, որ նրանցից յուրաքանչյուրը ուներ իր «նշանը» (գերբը), դրոշը և այլ տարբերիչ խորհրդանիշեր։ «Ձամագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին և ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն... դունդ առ գունդ ընդդէմ միմեանց կազմէին, և փողքն գոչէին և դրոշքն տարածանէին և նշանքն փողփողէին...» (տե՛ս Թոմայի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց. ՍՊԲ, 1887, էջ 109, 110. տե՛ս նաև էջ 125, 126, 144, 147, 150)։

[2] Ֆեոդալական իշխանության անկման և տոհմի ասպարեզից հեռանալուց հետո հաճախ զինանշանների կոմպոզիցիան օգտագործվում էր որպես զարդարանք նոր կառուցվող աշխարհիկ և կրոնական շինություններում, դառնում դեկորի տարր։ Նման տարրերի հայտնաբերումը և վերլուծությունը հայկական հերալդիկայի ուսումնասիրման եղանակներից մեկն է։

Հերալդիկ նշաններ հիմնականում պահպանվել են X—XIII դդ. կառուցած հուշարձաններում։ Նրանցում կարևոր տեղ ունի Դեղարդա վանքը, որի կառույցներից մեկում պահպանվել է Ռոշյան տոհմի զինանշանը (գերբը)։

XII դարի վերջում—XIII դարում Ռոշյանները Հայաստանի ամենաազդեցիկ ֆեոդալական տներից էին (որոշ ժամանակ երկրորդը Զաքարյաններից հետո) և մեծ դեր էին կատարում երկրի քաղաքական ու մշակութային կյանքում։ Դեղարդը նրանք գնել էին Զաքարյաններից, իսկ 1283 թ. Ռոշ իշխանը կառուցել էր ժայռակոփ եկեղեցի, որի գավիթը ծառայել է որպես տոհմական դամբարան։ Այստեղ էլ քանդակվել է Ռոշյանների զինանշանը։ Մեծ է այդ նշանի արվեստագիտական և պատմաաղբյուրագիտական արժեքը։ Նա որոշակիորեն օգնում է Ռոշյանների պատմության մի քանի կարևոր հարցերը, այդ թվում նրանց ծագումնաբանությունը պարզաբանելուն։

Պատմական օժանդակ գիտությունների (տվյալ դեպքում հերալդիկայի) տվյալների հետ միասին, խնդրո առարկան ուսումնասիրելու համար, անկասկած, առաջնային նշանակություն ունեն գրավոր աղբյուրների տեղեկությունները, որոնք մենք քննության ենք առել առանձին և դրանց օգնությամբ եզրակացրել ենք, որ Ռոշյանները ոչ թե առանձին ֆեոդալական տոհմ էին, այլ սերել են Մամիկոնյանների Տաշիրի տոհմաճյուղից։ Առանձնացումը տեղի է ունեցել XII դարի վերջում[3]։

Ռոշյանների զինանշանի, նրա կոմպոզիցիայի պատմական ակունքների պարզումը գալիս է լրացնելու և հաստատելու գրավոր աղբյուրների տվյալները։ Կոմպոզիցիան բարդ կառուցվածք ունի, այն բաղկացած է երեք բաղադրիչներից։ Կենտրոնում զետեղված է արծիվ, որը ճանկերում բռնել է ինչ-որ կենդանի (հավանաբար գառնուկ)։ Դա գլխավոր տարրն է։ Արծվի երկու կողմերում տեղավորված են առյուծներ, որոնք միմյանց հետ կապված են շղթայով։ Դա կոմպոզիցիայի երկրորդ բաղադրիչն է։ Վերջապես, երրորդ տարրը ցուլի գլուխն է, որը տեղադրված է քանդակի վերնամասում։

Ոչ մի կասկած չկա, որ նկարագրված քանդակը հանդիսանում է Ռոշյանների զինանշանը։ Սակայն նրա կոմպոզիցիան ունի իր կրկնօրինակը մեկ այլ ֆեոդալական տոհմի հերալդիկ նշանում։ Նկատի ունենք XII—XIV դդ. Տաշիր գավառի տերեր Մամիկոնյանների զինանշանը, որը (երկու տարբերակով) առկա է Դսեղ գյուղի միջնադարյան հուշարձաններում։

Նշված դարերում Դսեղը Մամիկոնյանների իշխանության քաղաքական կենտրոնն էր, նրանց «տէրի» նստավայրը, այնտեղ էլ գտնվում էր եկեղեցական թեմի գլխավոր վանքը՝ Բարձրաքաշի Ս. Գրիգորը։ Վանքը հիմնվել է 1221 թ. (Աստվածածին եկեղեցի), 1259 թ. կառուցվել է գավիթը, որի հարավային պատի արտաքին կողմից քանդակված է Մամիկոնյանների զինանշանը՝ երկգլխանի արծիվը, ճանկերում կենդանի, իսկ նրա ներքևում՝ գիրք է (նկ. 1)։ Քանի որ Դեղարդի քարակոփ եկեղեցին կառուցվել է ավելի ուշ, ուրեմն Ռոշյանների զինանշանի կոմպոզիցիան արդեն հայտնի էր այլ տոհմի հերալդիկ նշանից։

Բայց նշված հերալդիկ նշանը Դսեղում հանդիպում է ավելի վաղ ժամանակաշրջանից։ Գյուղի համարյա կենտրոնական մասում (ներկայումս Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի մոտակայքում) պահպանվել է մի ավելի հին կիսավեր կառույց, որը համարվում է VII դարի եկեղեցի[4]։ Նրա արևելյան պատի ճակատին քանդակված է մեզ հայտնի հերալդիկ նշանը՝ երկգլ-

---

[3] Տե՛ս Ռոշյան ֆեոդալական տոհմի ծագումնաբանությունը.—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, № 11, էջ 65—70։

[4] Տե՛ս Հ. Եղիազարյան. Դսեղի բարձրաքաշ Ս. Գրիգորի և Քառասնից մանկանց վանքերը և գյուղի մյուս առավել կարևոր հուշարձանները և դրանց վիմագիր արձանագրությունները.—«Էջմիածին», 1971, № 1, էջ 38։ Եկեղեցու նախնական ձևը եղել է կենտրոնագրմբեթ, խաչաձև հատակագծով, ուղղանկյուն խաչթևերով, որը բնորոշ է VII դարին։ Հետագայում այդ շենքը քանդվել է, կանգուն է մնացել միայն արևելյան թևը, որը հին եկեղեցու արևելյան աբսիդն է։ XIX դարում նրան կից կառուցվել է նոր սրահ, որպես գործող եկեղեցի (Նույն տեղում, էջ 42)։

խանի արծիվը, ճանկած մի գառնուկ։ Ձախ կողմից առյուծ չկա, բայց այստեղ նույնպես պետք է լիներ, որովհետև հակառակ դեպքում կոմպոզիցիան կորցնում է իր համաչափությունը։

Մամիկոնյանների գերբը իր երկու տարբերակներով ունի խոր պատմական արմատները։ Արծիվը Մամիկոնյանների զինանշանն էր դեռևս IV դարում, այդ մասին վկայում է Փավստոս Բուզանդը։ Մամիկոնյանների մասին պատմիչը գրում է. «Աղանազգիք աղանադրոշք արծուանշանք, վարժնականիշք աներկիւղք քաջասիրտք...»[5]։



Նկ. 1

Վենետիկի Մխիթարյան Վ. Հացունին, որը աշխատություն է գրել հայկական դրոշների մասին, մեկնաբանելով այս վկայությունը, «աղանազգիք» բառը համարում է գրչական սխալ։ Այդ նույն հատվածը պարունակում է նաև X դարի մատենագիր Մեսրոպ երեցի աշխատությունը։ Մեսրոպի երկում գրված է. «Աղեղնաձիգք, արծուենշանք, աղեղնադրոշք»[6]։ Վ. Հացունին հետևություն է անում, որ «հոս աղեղնաձիգք գեղեցկապես կ'ուղղէ նախորդին աղանազգիքը» և եզրակացնում է, որ Մամիկոնյանների դրոշի վրա պատկերված էր նետընկեց աղեղ[7]։ Բացի այդ, նրա կարծիքով, դրոշի վրա պատկերված էր նաև արծիվ, Փավստոսի նշած «վարժնականիշք»-ի արմատն է վարուժան (վարուժնակ, վարժնակ) բառը, որը նշանակում է արծվի և այլ թռչունների արուն։ Պատմիչի գործածած «արծուենշանք վարժնականիշք» բառերը Հացունին համարում է հոմանիշ բառեր արու արծվի իմաստով[8]։ Հիմնվելով Փավստոսի այս վկայության վրա, Հացունին վերականգնում է Մամիկոնյանների դրոշի պատկերը՝ ճանկերի մեջ աղեղ բռնած արծիվ[9]։

---

5 Փավստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց. Երևան, 1987, էջ 106։

6 Տե՛ս Պատմութիւն ս. Ներսիսի Պարթևի հայոց հայրապետի.—Սոփերք հայկականք, հ. Զ, Վենետիկ, 1853, էջ 17։

7 Տե՛ս Հայ դրոշները պատմության մեջ, գրեց Վարդան Հացունին. Վենետիկ, 1930, էջ 59։

8 Նույն տեղում, էջ 62։ Հացունին վկայակոչում է Թովմա Արծրունու պատմությունից մի հատված, ուր Դերենիկ Արծրունի իշխանը մեծարվում էր որպես «քաջազգի Վարուժանն... զբարձրաթիւ արծիվն» (Թովմա Արծրունի, էջ 299)։

9 Վ. Հացունի. նշվ. աշխ., էջ 63։ Նմանատիպ կոմպոզիցիա տարածված էր հին աշխարհում (Սելևկյանների, Պաղոմյանների, Անտիոքի, նախաարշակունյաց Հայաստանի դրամներում. տե՛ս նույն տեղում)։

Վ. Հացունու կողմից Մամիկոնյանների դրոշի պատկերի վերականգնումը, մեր կարծիքով, միանգամայն համոզիչ է։ Պետք է ավելացնենք, որ Փավստոսի «արծուանշանք» արտահայտությունը վկայում է, որ նույն տոհմի «նշանը» (գերբը) նույնպես պատկերում էր արծիվ։ Այդ են հաստատում Զվարթնոցի տաճարի խոյակների արծվի հերալդիկ նշանները, որոնք Մամիկոնյանների «նշաններն» են. հայտնի է, որ Զվարթնոցի կառուցողն էր Ներսես Շինարար կաթողիկոսը, որը սերում էր Մամիկոնյանների տոհմից[10]։

Սակայն Զվարթնոցի արծիվը ճանկերում կենդանի չի պահում։ Ըստ երևույթին, կոմպոզիցիոն այդ լուծումը արված է գիտակցաբար (արծվի պատկերը քանդակված է խոյակի ամբողջ բարձրությամբ, մյուս մասի համար տեղ չի մնացել)։

Փավստոս Բուզանդի մեջբերված հաղորդումը ցույց է տալիս, որ Դսեղ գյուղի պաշտամունքային կառույցների հերալդիկ նշաններն ունեն պատմական հիմք, նրանց կոմպոզիցիայի ակունքները հասնում են մինչև IV դարը։ Սակայն ժամանակի ընթացքում կոմպոզիցիան կրել է որոշակի փոփոխություն՝ աղեղը փոխարինվել է կենդանու, իսկ VII դարից՝ արծվի պատկերով, որը ճանկող է[11]։



Նկ. 2

Ժամանակագրական կարգով հաջորդ (մեզ այժմ հայտնի) հուշարձանը, որը ունի ճանկող արծվի քանդակ, Անիի պալատական եկեղեցին է։ Նրա երկու հարթ որմնասյուների վրա քանդակված են արծիվներ՝ ճանկերում կենդանի բռնած (նկ. 2)։ Ն. Մառը այս եկեղեցին թվագրում է նախաբագրատունյաց շրջանով, երբ Շիրակն ու Անին պատկանում էին Կամսարականներին[12]։ Սակայն ի՞նչ պատճառով Կամսարականների եկեղեցում պետք է քանդակվեր Մամիկոնյանների հերալդիկ նշանը, առայժմ մնում է անհասկանալի, գուցե դրանում դրսևորվել են Կամսարականների և Մամիկոնյանների սերտ կապերը։

Մամիկոնյանների զինանշանի կոմպոզիցիան անցել է Գոռշյաններին, դա պարզ երևում է երկու տոհմերի վանական կառույցների հերալդիկ նշաններից։ Սակայն Գոռշյանների մոտ հորինվածքը մասնակի փոփոխություն է կրել՝ ավելացվել է ցուլի գլուխը, իսկ առյուծները միմյանց հետ կապվել են շղթայով։

Գոռշյանների զինանշանը հանդիպում է նրանց իշխանության սահման-

10 Պատմութիւն Սեբէոսի, աշխատութեամբ Գ. Արզարյանի. Երևան, 1979, էջ 166։

11 Կոմպոզիցիայի մանրամասների ձևափոխումը տարածված երևույթ էր միջնադարյան հերալդիկայում։ Բնորոշ օրինակներից է Նովգորոդի գերբը Ռուսաստանում։ Նրանում պատկերված էր վեչեի զենքը, որին հենած էր գավազանը (Նովգորոդի բոյարական հանրապետություն, XV դար)։ Հետագա դարերում ռուսական կենտրոնացած պետությանը միացվելուց հետո, գերբը փոփոխվել է։ Զենքը վերածվել է դահի, որի երկու կողմերից ավելացվել են արջեր։ Դա արդեն միապետական գերբ է։ Տե՛ս А. Арциховский. Древнерусские областные гербы.—Ученые записки Московского государственного университета им. Ломоносова. Вып. 93, История, кн. 1. М., 1946, с. 49—51.

12 Տե՛ս Н. Марр. Ани. Ереван, 1939, с. 95, 96. Պալատական եկեղեցու մասին տե՛ս նաև՝ Ս. Մնացականյան. Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը. Երևան, 1976, էջ 19—22։

ներում կառուցված շատ վանքերում և այլ շինություններում (օր.՝ Թանահատի վանք, Գոմեր գյուղի մատուռ, Կեչառիսի վանք, Թանահի եկեղեցի, Մարաթուս գյուղի եկեղեցի և այլուր)։ Բայց բոլոր դեպքերում չէ, որ հերալդիկ նշանը պարունակում է երեք բաղադրիչները։ Հաճախ առկա է միայն զինանշանի գլխավոր տարրը՝ ճանկող արծիվը։

Կոմպոզիցիայի երեք տարրերը առկա են Մարաթուս գյուղի եկեղեցում (ՀՍՍՀ Ազիզբեկովի շրջան), որը այժմ կիսավեր է։ Եկեղեցին կառուցվել է XIII—XIV դդ. սահմանագլխին (կա 1308 թ. արձանագրություն), արևելյան պատին բարձրաքանդակ հերալդիկ նշան է եղել՝ ճանկող արծիվ (կենտրոնում), ցուլի գլուխ (ձախից) և առյուծի դունչ (աջից), (նկ. 3)։ Այժմ բարը հանված է տեղից և դրված է առանձին[13]։

Նույն շրջանի Գոմեր գյուղում գտնվում է մատուռ, որը ունի 1263 թ. արձանագրություն։ Նրանից հայտնի է, որ մատուռը կառուցվել է Պողջ իշխանի օրոք, կառուցողներն են Մխիթարն ու նրա կին Արևիկը։ Մատուռին կից նրանք կանգնեցրել են մեծ խաչքար[14], որը միաժամանակ մատուռի արևմտյան պատն է հանդիսանում։ Խաչի տակի մասում քանդակված են ցուլ և առյուծ, իսկ մատուռի ճակատին՝ ճանկող արծիվ (նկ. 4)։ Շղթայակապ

Նկ. 3



Նկ. 4

առյուծներ պատկերված են Գլաձորում 1318 թ. գրած մի ձեռագրում[15] (նկ. 5), իսկ Գլաձորը Պողջյանների իշխանության մշակութային կենտրոններից մեկն էր։

Այսպիսով, Մամիկոնյանների և Պողջյանների զինանշանի ընդհանուր բաղադրամասերն են ճանկող արծիվը և առյուծները։ Առյուծները կոմպոզիցիայի լրացուցիչ ֆիգուրներ են։ Նախորդ դարերի հայկական հերալդիկայում օգտագործվում էին այդպիսի լրացումներ. օրինակ՝ կամսարականների զինանշանում ցուլի գլուխը երկու կողմից որպես «պաշտպաններ» ուներ վիշապներ[16]։ Իսկ Պողջյան-Մամիկոնյան զինանշանում պաշտպաններն են առյուծ-

---

13 Գ. Հովսեփյան. Խաղբակյանք կամ Պողջյանք հայոց պատմության մեջ. Անթիլիաս, 1969, էջ 23, 24։ Материалы по археологии Кавказа. Вып. XIII, М., 1916, с. 153.

14 Մատուռի մասին և նրա լուսանկարը տե՛ս Материалы по археологии Кавказа. Вып. XIII, с. 155: Տե՛ս նաև Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., էջ 23, 24, 72։

15 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 206, թ. 461։ Համեմատ. Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., էջ 272։

16 Н. Марр. Указ. соч., с. 95, 109.

ներ։ Յուլի գլուխը ավելի է ուժեղացնում նշանի տպավորությունը. մեր կարծիքով Պռոշյանները Գեղարդում օգտագործել են Կամսարականների հերալդիկ նշանը, որպեսզի ավելի ընդգծվի նշանի ընդհանուր արտահայտչականությունը։ Յուլի բերանում օղակ է, որին և միանում է երկու առյուծներին շաղկապող շղթան։ Նման օղակ կա նաև Աղթամարի քանդակներից մեկում՝ այն բերանում են պահում երկու արծիվներ։ Հ. Օրբելու կարծիքով, դա Արծրունիների զինանշանն է, իսկ օղակը իշխանի տիրության խորհրդանշան է[17]։

Նկ. 5

Միանգամայն հավանական է, որ նույն ֆունկցիան կատարում է օղակը Պռոշյանների զինանշանում, իսկ շղթան միմյանց է կապում կոմպոզիցիայի բոլոր տարրերը։

Այսպիսով, Պռոշյանների զինանշանը, որը ստեղծվել է XIII դարի երկրորդ կեսին, երբ այդ տոհմը արդեն մեծ ազդեցություն ուներ երկրում, հին հայկական հերալդիկ նշանների յուրատեսակ «հավաքորդ» է։

Ն. Մառը նշում է, որ հերալդիկ նշանների համար առյուծները կամ արծիվները օգտագործվում էին հին, նույնիսկ տոհմատիրական Հայաստանում։ Այդ դարաշրջանների համար դժվար է գտնել գրավոր վկայություններ[18]։ Հենց այդ առումով էլ XIII—XIV դդ. հերալդիկ նշանները մեծ պատմամշակութային արժեք են ներկայացնում, որովհետև նրանցում հաճախ օգտագործվել են

[17] Տե՛ս И. Орбели. Избранные труды. Т. I, М., 1968, с. 121—124.
[18] Н. Марр. Указ. соч., с. 95.

ավելի վաղ շրջանի՝ IV—VIII դդ. իշխող հայկական ֆեոդալական տների գերբերի տարբեր բաղադրամասերը։

XII—XIV դդ. հերալդիկ նշանների քննությունը և նրանցում վաղագույն տարրերի հայտնաբերումը հնարավորություն կտա վերականգնելու Արշակունյաց և Բագրատունյաց շրջանների ֆեոդալական անների հերալդիկան։ Դրանում առանձնակի արժեք ունի Պռոշյանների ղինանշանի բարձրաքանդակը Գեղարդում։

Գալով Պռոշյանների և Մամիկոնյանների ազգակցական կապերի հարցին, պետք է եզրակացնել, որ երկու առհմերի հերալդիկ նշանները արտացոլում են Մամիկոնյան տոհմի ճյուղավորման պրոցեսը, որի հետևանքով առաջ եկավ ֆեոդալական նոր իշխանություն և ազդանուն։ XIII դարում Պռոշյաններն արդեն ինքնուրույն առհմ էին, բայց չէին կարել կապերը մայր տոհմի հետ։ Դրանով էլ պայմանավորված էր երկու առհմերի հերալդիկ կոմպոզիցիաների ընդհանրությունը[19]։

РОДОВОЙ ГЕРБ ПРОШЯНОВ И ЕГО ИСТОРИКО-ГЕНЕАЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ

Р. И. МАТЕВОСЯН

Резюме

Армянская средневековая геральдика изучена недостаточно. В письменных источниках содержится мало сведений о геральдических знаках. Гербы сохранились в основном на культовых сооружениях X—XIII вв. и в некоторых рукописях. Большую ценность представляет герб рода Прошянов, который был высечен в родовой усыпальнице при пещерной церкви (построена в 1283 г. князем Прошем). Здесь сложная композиция: когтящий ягнёнка орел, по бокам которого львы. Венчает композицию голова быка. Подобную композицию (отличие лишь в деталях) имеет герб рода Мамикопянов, высеченный в церкви села Дсех в монастыре св. Григора Бардзракаш. Это сходство не случайно. Общие геральдические композиции двух родов подтверждают свидетельства письменных источников о том, что Прошяны являются побочной ветвью феодального рода Мамиконянов.

---

19 Պետք է նշել, որ XII—XIII դդ. Պռոշյանները կոչվում էին «Խաղբակնց» (տե՛ս Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., էջ 304, 305, 308, 309), իսկ Պռոշյան անունը տրվել է նոր ժամանակներում։